

Խաղս առնելով պէսպէս ջուրց, ցանել զմիմեամիք առատ վըտակ, եւ զիրեարս ի մակուկաց մըղել յանդունդս յալեաց ճողփիւն:

Մինչդեռ Հայկ ընդ հին ալիսն ի ծովածուփ իջեալ նաւուց բազմէին ի ծաղկաւէտ ափին՝ սօսւոյն ընդ հովանեաւ ի զընին խաղուց մանկառոյն եւ ձիարշաւ սպայիցն ի դաշտ, Երեւէր ի հարաւոյ փոշի ՚նդ երկինըս փոթորկեալ, Եւ ի ՚նմա իրրեւ ընդ ամպըս խիտ առ խիտ փայլատակունք, Նըշմարէր ի հեռաստանն այլազգի վաշտ հեծելազօր Այլակերպ արանց ի պղինձ վառեալ յերկաթ, հարիւրով չափ, Իջանէին ի լերանց՝ երիտասարդ մի սկայ ի գլուխ:

Խոռվէր խուն մի ցընծութիւնն, այլ ոչ երկիւզ եւ ոչ աղմուկ. Առաքէր դիւցազն անդէն ըզզինակիրն արին կոռնակ, Հասանել ձիաթափ, հարցեալ զողջոյն բերել զըրոյց: Մանուկն Արմայիս ի ծըփական լուղիցն ելեալ Կարմրայտ խարտիշագեղ եւ ի խազուցըն քըրտնաթոր, Արուսեկին նըմանեալ՝ որ ցողազին ընդ առաւօտս Արփիագեղ ծագելոյ յովկիսնու լոգարանացն, « Ըզքաշն Առնակ, ձայն եբարձ, տեսանեմ ես ընդ եկո ոմանս, Այն որ հաւիկս հրամայեաց ի Հայկաշէն կալ ընդ պահնակս »: Ընդ որդիսն եւ ալեւորս հայրն ի վըրան իւր մըտանէ, Ժողովի եւ այլ ամրոխն, ըզխորանաւ պատին ըսպայք, Ի մօտոյ հետեւազօրք եւ ի բացէ հեծելազունդ, Անցս ինչ թողեալ ի միջի փողոցաձեւ, զինուք ցանկեալ: Հաս կոռնակ տալով զըրոյց, « Հըեշտակք թելայ գան Առնակաւ »:

ՀԱՅԻ · ԵՐԳ · II.

ԽՄ ՎԱՆՔՍ

Դրաքեանի մը անտիպ յիշատակազիրք:

Ե

Առաւոտ մը կանուխ տանտիրոջը Լամբերտ անունով ծառայի մը հետ գաւթին մէջ կեցեր կը խաղայի: Երիտասարդ մըն էր ասիկայ, որ գեռ քսան տարեկան չկար. բարձր և վայելուչ հասակովը, երկայն և խիտ մազերովը, և երկու պզտի բայց աշխայժ աչքերովը ամենուն զինքը կը սիրցընէր, և մասնա-

սորապէս իր տիրոջը: Ոմենէն աւելի մտագիր էր աշխատութեան, իր մեծերուն հպատակ, և իր հաւասարակցաց և սոորնագունից հետ սիրով վարուող: Թէպէտ և մեր երկուքին մէջ տարիքի զգալի տարբերութիւն կար. ինչու որ ես տղայ մը կրնայի ըսուիլ, և ինքը երիտասարդ մըն էր և կ'ախորմէր ալ որ անանկ զուրցուի, այնու հանդերձ վրաս բարեկամի մը սէր և եղբօր մը գորով կը ցուցընէր: Մանաւանդ թէ ինձի եղբօր անուն կու տար, և կերպով մը կրնար ալ ինձի այդ անունը տալ, որովհետեւ հայրս զինքը երկու ծնողքէն ալ որբացած և կրնայ

լառուիլ որ ճամբուն մէջ տեղը մնացած՝
քովն առաւ, և իբրև թէ իրեն որդին
ըլլար՝ այնպէս մեծցուց և դաստիարա-
կեց : Անոր համար իրարու հետ սիրա-
լիր ընտանութեամբ մը կը վարուէինք,
և եթէ իր երիտասարդութեան հասա-
կը մտածելով՝ տղոց հետ խաղալէն հե-
ռու կը կենար, բայց իմ տղայական
խաղերուս մասնակից ըլլալէն չէր քա-
շուեր, և շատ անգամ նախ ինքը զիս
կը հրաւիրէր գնտակ խաղալու, կամ
շրջանակով ու գաւազանով վազելու :
Այս առաւօտը լամբերտ սովորականէ
դուրս լուռ և մաղձոտ էր : Կանչեցի
զինքը հետս խաղալու . յանձն առաւ,
բայց ոչ այն սովորական պատրաստա-
կանութեամբ և զուարթութեամբը :
Երբեմն խրձի պէս կապուած ուռենի-
ներէ և ուրիշ ճիւղերէ ձևացած պատի-
ցանկի մը վրայէն կը ցաթէր, և զար-
մանալի ճարտարութէ կաղնիէ հաստ
գաւազան մը կը խաղցընէր, զոր երկու
ձեռքովը զիխուն վրայէն այնպիսի ա-
րագութեամբ կը դարձընէր, որ կարծես
թէ օգուն մէջ բարակ և շոգեխառն շրջ-
անակ մը կը գծէր :

Աս իրեն սիրած խաղն ընելու վրայ
էր, մէյմ' ալ կը տեսնամ որ յանկարծ
կը կենայ, և գաւազանը բարձր անշարժ
կը բռնէ, որ կարծես թէ չերակլեայ
արձան մին էր, լախար վերուցած՝ սոս-
կալի հարուած մը տալու դրբի մէջ :
Աշխատութենէն կարմրցած երեսը,
մէկ վայրկենի մէջ դիակի մը երեսին
պէս զեղինցաւ և գունատեցաւ : Երբ-
թունքները խածնել ուզելու պէս չա-
րաշար կը սխմէր, և ինչպէս յանկար-
ծական և ցաւադին մտածութենէ մը
բռնուողը կ'ընէ, աչքերը անշարժ դէպ
՚ի գետին տնկած էր : Ես այս տեսարա-
նին յանկարծական փոխուելուն յափըշ-
տակուած մնացի, և պատճառն հարցը-
նելու սիրտ չընելով, սասափիկ ափշու-
թեան մէջ լուռ իրեն կը նայէի : Այս
դրբին մէջ երկայն ատեն այնպէս կե-
ցաւ, վերջը գաւազանը ուժով մը գաւ-
թին սալայատակին զարնելով, խղղուկ
ձայնով մը կանչեց . Անէծք, անէծք :

Ան ատեն աեղէս շարժեցայ և վա-
խով լեցուած հարցուցի իրեն . Լամ-
բերտ, ինչ ունիս լամբերտ, կ'աղաչեմ
զուրցէ ինծի : Բայց լամբերտ չէր պա-
տասխաներ . միայն զլուխը շարժեց,
նետեց գաւազանը գետինը, թեւերը
իրարու վրայ դէպ ՚ի կուրծքը ամփո-
փեց, և այն երկու աչքերովը՝ որ կար-
ծես թէ տեղէն դուրս կ'ուզէին ելլալ,
անշարժ կեցած ինծի կը նայէր :

— Ի՞նչ ունիմ, պոռաց վայրկեան մը
վերջը, ինչ ունիմ . հապա չտեսա՞ր :

— Բայց ինչ բան, հարցուցի երկիւ-
ղալից անձկութեամբ մը :

— Ի՞նչ բան . չտեսա՞ր դեռ հիմայ ով
անցաւ զղեկին դրան առջեն :

— Ես չէ, պատասխանեցի մէկէն .
չկրցայ մէկը տեսնել, որովհետեւ զար-
մացած քու կարգէ դուրս ճարտարու-
թեանդ փորձերը կը դիտէի :

— Բայց ես աղէկ տեսայ . և թէպէտ
ծպտեալ էր, բայց մէկէն զինքը ճանչ-
ցայ :

— Ո՞վ է ասիկայ :

— Պաւտիի կոմնն է :

— Ա՛հ, կանչեցի մէկէն, իմ հօրո
մարդասպամնը :

— Եւ մեր տիրոջը մարդասպանը :

— Ի՞նչ բան կ'ըսես :

— Գիտեմ ինչ որ կ'ըսեմ . դու տղայ
ես և գեռ բան չես հասկընար . որ կու-
գայ որ դու ալ ամեն բան կ'իմանաս,
և սոսկումն կ'ունենաս, ինչպէս ես կը
զգամ :

— Թերես քեզի չափ գիտեմ, ըսի
մոքէս . հիմայ ամեն բան կատարեալ
կը հասկընամ :

Այս համառօտ խօսակցութենէն ե-
տեւ, երկուքնիս ալ իրարու երեսը նայ-
ելով՝ երկայն ատեն լուռ կեցանք : Վեր-
ջապէս լամբերտ սաստկութեամբ մը
իր անշարժ կեցուածքը թողուց, և ու-
ժով մը ձեռքս բռնելով ըսաւ . Եկուր,
չենրիկոս, դեռ ժամանակ ունինք մեր
տէրը ազատելու :

Այս խօսքերս մթութեան և ցաւոց
մէջ ձգեցին զիս . Մէկ կողմանէ կ'ըմ-
բըոնէի որ տանտէրը ծանր վտանգի մը

մէջ է, մէկալ կողմանէ ինչ բան ըլլար չէ զիտեր, և որ չարագոյնն է, ինչ պէս կրնայինք մենք երկուքնիս դարման մը ընել: Բայց այս անստուգութիւնս շուտով վերցաւ, երբ լամբերտ զիս մէկզի տաճելով՝ ցած ձայնով մը ըստ Հենրիկոս, ոռու պղտիկ ես, բայց բաւական խելք ունիս ըստածս ընելու: Մանաւանդ թէ քու հասակդ զքեզ աւելի կարող կ'ընէ կատարելու ինչ որ հիմա պիտի զուրցեմ, առանց մէկու մը կասկած մը տալու, որ ուրիշ մը կրնար պատճառել: Մտիկ ըրէ. զու պէտք է խոհանոցը կենաս. ուշադրութեամբ ամեն սեղան բերուած սկաւառակներն ու կերակուրները զիտէ: Ես մնացածը կը զիտեմ: Տեսնելուդ պէս որ խոհարարը կամ ուրիշ մը պնակի կամ շիշի մը մէջ կապուտ թղթի մէջ պղած ճերմակ փոշի մը կը դնէ, մէկէն վազէ իմաց տուր ինծի. ես սեղանի սրահին մօտիկ խուցն եմ:

Այս խոպերս՝ մութ և մրրկալից զիշերուան մէջ իբրև փայլակ մը եղան: Մէկէն ինծի այն նշանաւոր գիշերը՝ քարայրին մօտ լսած խօսակցութիւնս յիշեցուցին: Հասկըցայ մէկէն ինչ ըսել կ'ուզէր լամբերտ, և խոստացայ որ ամենայն կերպով կը կատարեմ:

Զիրար թողուցինք, և ես խոհանոցը գնացի. և որովհետեւ սոէչպ երթալու սովորութիւն ունէի, իմ հոն գտնուիլս մէկու մը աչքը չզարկաւ: Նախաճաշին ժամանակն եկաւ, և ես մեծաւ մտադրութեամբ կը զիտէի թէ խոհարարը պնակներուն և գաւաթներուն մէջ ինչ կը դնէր. բան մը չանդրադարձայ: Յահան առած գործոյս ուշագիր՝ ինչուան ճաշոյն ժամանակ հոն մնացի: Ոմենայն կարգաւորութեամբ՝ համեմունքն և աղանդեղը և խորտիկը և անուշունք կ'անցնէին. և բանի մը մէջ ճերմակ փոշւոյն դրուիլը չտեսայ, և ոչ մէկուն ձեռքը կապոյտ թուղթը տեսայ: Ճաշը լմինալէն ետեւ, գէպ 'ի լամբերտին սպասած խուցը կ'երթայի որ իմ զիտողութեանցս վրայգը տեղեկութիւն տամիրեն, մէյմ'ալ նեղ և մութ

սրահի մը մօտէն անցնելու ժամանակ, աճապարանօք այս կարճ և չփոթ խօսակցութիւնս ընելը կը լսեմ:

- Ուրեմն:
- Գործը կատարուեցաւ:
- Ապահնվ ես:
- Ամենայն կերպով ապահով:
- Շատ աղէկ:

Վերջը տեսայ որ մէկը ստուըներուն ծայրերուն վրայ քալելով՝ սրահին մէկալ կողմէն հեռացաւ, և տանը ծառայ մը՝ ձեռքը քանի մը պնակներով գէպ 'ի խոհանոցը գնաց: Որմակից տախտակի մը վրայ զանոնք դնելու ժամանակ, ձեռքէն անձեռոց մը ինկաւ. շուտով մը ծռեցաւ, առաւ զայն գետնէն և խոհանոցը մտաւ: Անձեռոցին ինկած տեղը տեսայ որ բան մը մնացեր էր: Մօտ կ'երթամ՝ կը զիտեմ. ծալշած թղթի կտոր մըն էր: Նորէն և աւելի մանրամասն կը նայիմ, և կը տեսնեմ որ կապոյտ գունով է: Չեմ կրնար ըսել ինչ տպաւորութիւն որ ըրտ վըրաս այն թուղթը և այն գոյնը: Դողալով առի զայն, և վազելով լամբերտը փնտըռելու գացի. և ճիշդ ինծի զուրցած խուցը գտայ զինքը, ուր սեղանին սպասները ընկուղէ գեղեցիկ գարանի մը մէջ կը դնէր:

- Լամբերտ, լամբերտ, պոռացի, զինքը տեսած չտեսած:
- Հենրիկ, դու ես:
- Ես եմ: Մինակ ես:
- Այս՝ նոր բան մը ունիս:
- Եւ ինչպէս. նայէ մէյմը:

Աս ըսելով ցցուցի իրեն գետնէն զըտած կապոյտ թուղթը:

- Վայ մեզ, գոյնը նետած կանչեց լամբերտ. կապոյտ թուղթ մը:
- Այս՝ և առանց ճերմակ փոշւոյն:
- Ուր գտար:
- Խոհանոցին դրան մօտ:
- Աստուած իմ, ըստ և սկսաւ սաստիկ արցունք թափել: Իսկ անկէց մէկու մը անցնելը չտեսա՞ր:
- Այս՝ ճառայի մը ձեռքէն անձեռոց մը իցնալը տեսայ. այս անձեռոցին տակ թուղթը կար:

— Ո՞վ է աս ծառան:

— Փիլիպպոս :

— Փիլիպպոս. ահ տիրանենդ դաւան:

Այն վայրկենին տէրերուն կեցած խուցը աղաղակ մը կը լսենք . վերջը նոյն խցին զանգակին սաստկութեամբ և ուժով զարնուիլ մը : Վերջին յուսահատութեամբ « Օգնութիւն , օգնութիւն , շնւա օգնութիւն » պոռալ մը կը լսենք : Խաթունին ձայնն էր :

Ամենայն արագութեամբ կը վազէ լամբերտ , ես ալ ետեւէն : Հազիւ թէ կը մտնանք , մէյմ' ալ կը տեսնենք որ տանտէրը աթոռի մը վրայ տարածուած՝ կը գալարի և կը մոլեգնի , ցաւազին հեծութիւններ արձըկելով : Խաթունը մազերը փետելով և գրեթէ ինքիրմէ դուրս , կը ջանար զինքը բունելու , երբեմն երբեմն իր թաշկինակովը անոր ճակտէն իջած քրաինքի խոշոր կաթիլներն սրբելով :

— Ո՞՛ Տէր , կը մեռնիմ , կը կանչէր տանտէրը . շնւա ժողովրդապետը :

Ուրիշ ծառաններ ալ վազեր եկեր էին . նաև մայրս ալ եկեր էր , պղտի կարոլինան գիրկը բոնած : Մէկ վայրկենի մէջ բոլոր տնեցիք այն խուցը թափեր էին . աչքս չորս կողմն դարձուցի , և տեսայ որ մէկ հոգի միայն պակաս էր . և ֆիլիպպոսն էր :

Խսկ տանտէրը չարաշար ցաւերով կը տանջուէր : Սրտաշարժ և ողորմելի տեսարան մըն էր . արձըկած աղաղակներն , և այն կատաղութիւնը որ զինքը աթոռին վրայ բիւր կերպով շարժել կու տար , բոլոր հոն եղողներուն աչքէն ցաւոց և կարեկցութեան առատ արցունք թափել տուին : Փիշ մը վերջը եկաւ թիշկն ու ժողովրդապետը . զինքը զննեցին և խաթունին զանազան հարցմունքներ ըրին : Վերջը տեսայ որ բժիշկը մէկղի կանչեց ժողովրդապետը , և մէկտեղ քանի մը բան խօսեցան : Ետքը ժողովրդապետը , երեսը արցունքով լցուած , գրանէն քսակ մը հանեց , ուսկից արծաթէ աման մը հանելով , ուրարը դրաւ , և ճրագ մը վառել

տալրով , ըսաւ ամենուս որ ծունը դնենք . և այն խեղճին վերջին օծումը տուաւ : Այս վաեմ արարողութիւնն հազիւ լըմբնցուց , մէյմ' ալ տանտէրը սոսկալի աղաղակ մը արձըկելով , և ուժով մը ոտքի ելլելով , նորէն աթոռին վրայ ին կաւ և հոգին աւանդեց : Խաթունը այն տեսնելով՝ մարեցաւ , և գետին կը տարածուէր , թէ որ երկու ծառայ զինքը չբռնէին : Բժիշկը զինքը անկողին տանել տուաւ , և մէկտեղ զնաց որ զինքը խնամէ : Ժողովրդապետը հեծկլտալէն ընդհատեալ և խղդուած ձայնով 'ի խորոցն ըսաւ :

Ելլելու վրայ էինք , մէյմ' ալ բոլոր սև հագուած պարոն մը , հետն ալ երկու զինուոր , ներս մտաւ :

Մէկը չչարժի աս տեղէն , պոռաց : Բժիշկը կանչել տուաւ , որ մէկէն եկաւ հասաւ : Իրեն երկու կամ երեք հարցմունք ըրաւ . վերջը ուրիշ երկու հոգի ալ ներս մտուց , և ըսաւ անոնց : Դղեակը մանրամասն հետազոտեցէք . և նախ ծառանները հետազոտելէն սկրսեցէք :

Այն երկուքը հնազանդեցան և հոն եղողներուն վրայ մէկիկ մէկիկ լաւ մը նայեցան : Երբոր լամբերտին կը հասնին , կը լսեմ որ անոնցմէ մէկը իրեն կը հարցընէ . ինչ բան է ան ձեռքիդ մէջ եղած թուղթը : Կը նայիմ և կը տեսնեմ որ իմ իրեն տուած կապոյտ թղթիս կտորն է : Սև հագուած մարդը , երբ լսեց այս հարցմունքը , կանչեց՝ թուղթ մը . հոս ինծի որ տեսնեմ : Մէկէն տրուեցաւ իրեն , և լաւ մը զննեց զայն : Բանալու ատեն կը տեսնայ որ ամենաբարակ փոշի մը դուրս կ'ելլէ : Պարոն բժիշկ , ըսաւ մէկէն , պարոն բժիշկ , նայէ մէյմը . ինչ կրնայ ըլլալ այս փոշին : Բժիշկը ձեռքը կ'առնէ թուղթը , և պատուհանին մօտենալով , վասն զի գրեթէ իրիկուն եղեր էր , կը զննէ զայն , և դարձեալ կը դառնայ աւելի ուշադրութեամբ կը զննէ . վերջը այն պարոնին դառնալով , զայրագին ձայնով մը ըսաւ . թոյն է :

— Թոյն , պոռացին ամենքը սոսկամբ , թոյն :

— Այս թոյն :

Խեղճ Լամբերտը աս որ լսեց՝ պատկորեցաւ։ Գլխին ինչուան ոտք կը դողար, և դարձաւ ինծի նայեցաւ, կարծես թէ ըսել ուզելով։ Ճես հիմայ ինչ բան փրթաւ գլուխս։

Սև հագուած պարոնը Լամբերտին դառնալով՝ հարցուց իրեն։

— Ի՞նչպէս այս թուղթը ձեռքդ անցաւ։

— Չեմ գիտեր, կակաղելով մը պատասխանեց Լամբերտ։

— Չես գիտեր։ Ստուգութիւն է ասիկայ։ Շխտակը զուրցէ։ ուսկից առիր և քեզի ով տուաւ ատիկայ։

— Ոչ ոք։

— Ուրիշ ոուտ մ' ալ։

— Ես իրեն տուի, պոռացի գրեթէ ինքնարերարար։

— Դուն, հարցուց պարոնը զարմանքով. ուսկից և ինչպէս ունեցար։

— Խոհանոցէն քիչ հեռու՝ գետինը գտայ։

— Պարոն բժիշկ, մտիկ ըրէ, ըսաւ անիկայ. խոհանոցէն քիչ հեռու։

— Իրաւցնէ կասկածս ճշմարտեցաւ, ըսաւ բժիշկը հառաջելով։

— Երկուքնիդ ալ բռնուած էք, ըսաւ այն պարոնը, ինծի և Լամբերտին դառնալով. զօրականք, հսկեցէք ասնց վրայ։

Այս խօսքերուն մայրս յուսահատ մը պոռաց, և սաստիկ լալ մը փրցնելով, այն խիստ և բայցարձակ հրամանը տուողին դիմաց ծնկան վրայ եկաւ։

— Ա՛ն, պարոն, կ'ըսէր մայրս, հաւատա ինծի, տղաս անմեղ է. կարող չէ այդպիսի ոճիր մը գործելու։

— Այնչափ աւելի աղէկ իրեն համար, պատասխանեց պաղ կերպով մը այն պարոնը. եթէ անմեղ է մէկէն աղատ կ'արձակուի. իսկ եթէ յանցաւոր է, պէտք եղած խստութեամբը կը պատժուի։

Եւ առանց ուրիշ բան ըսելու, հրաման տուաւ զինուորներուն որ զմեղ բանտ տանին։

Շատ մը բազմութիւն ժողովրդեան,

տանտիրոջ մահուան ախուր լուրէն շարժած, որ մէկէն գեղին մէջ տարածուեր էր, զղեկին զրան առջև ժողովուեր էր։ Ես և Լամբերտ, և երկու զինուոր հետերնիս, հարկեցանք այն բազմութեան մէջէն անցնիլ։ Ամենքն ալ զարմանքով մեզի կը նայէին։ Ինչպէս եղաւ, ամբոխին մէջ ձայն մը տարածուեցաւ թէ մենք երկուքնիս թունաւորեր, զիտաղութիւն է ինչ կատաղութիւն որ ունեցան այն լուրին բոլոր այն պարզամիտ բնակիչքը. մեզի գէմ սոսկալի հայհոյութիւններ արձակեցին. և ամբոխին մէջ այս ձախող ձայնն հնչեց. ի մահ մարդասպանքն, կրկնեցին մէկէն հազար ձայներ զարհուելի կատաղութեամբ։ Այն ալէկոծ ամբոխին այսպէս պոռալը և մոլեգնութեամբ և բարկութեամբ վրանիս վազելն մէկ եղաւ։ Զինուորներն իրենց ամենայն ուժովը այն բռնութեան գէմ կեցան. մերթ ողբանօք և մերթ սպառնալեզր այն մոլեգնելոց կատաղութենէն կ'ազատէն զմեզ։ Հուսկ վերջը ստիպուեցան սուրերնին մերկացնել և նաև աւելի յանդուգներուն քանի մը հարուած ալ տալ որ զմեզ մոլեգնութենէն ազատեն։ Ես սաստիկ կու լայի, և Լամբերտին կը պլուէի որ այն շփոթութեան մէջ մեծագոյն պալ արեամբ և զարմանալի անխուովութեամբ կեցեր էր։ — Մի վախնար, չենրիկ, կ'ըսէր ինծի գրեթէ խնտալով. քեզմէ մազ մը խլելէն առաջ նախ զիս պէտք է մեռցընեն։

Բայց երբոր բանտին մօտ հասանք, ամբոխը երթալով աւելի բազմացաւ։ Բարկութիւնն ու զայրացմունքը որչափ մեծագոյն բռնութիւն կը զտնէր, այնչափ փոխանակ նուազելու աւելի կը սաստկանար։ Ամբոխը երթալով աւելի վրանիս ինկաւ. և երկու զինուորներն չէին կրնար բռնել զայն։ Աւելի սրտուներէն ոմանք ինչուան նաև ձեռք երկրն ցուցին Լամբերտին. բայց ինքը քանի մը ուժով և շեշտակի հարուածով դիւրաւ կըցաւ ինքզինքը վրան յարձակող.

ներէն բաժնել։ Իր անձին համար չէր վախեր։ Ինծի համար էր վախը, որ պզտիկ ըլլալով, այն կատաղի և խռովայով ամբոխին կռուին տակ ջախջախուելու մեծագոյն վտանգի մէջ էի։ Այնչափ չորս կողմի բազմութենէն ճընշուած՝ զրեթէ խղղուելու մօտ էի, մէյ մ՝ ալ լամբերտ թևերով ու արմեներով քիչ մը տեղ բանալով, գետնէն կը վերցընէ զիս և ուսերուն վրայ կ'առնէ։ — Վզիս լաւ մը պլուած կեցիր, պոռաց, և մի վախեր ամեննին։ — Վերջը իրեն մօտ կեցող յաղթանդամ և ջղուտ գեղացոյ մը ձեռքէն խոշոր գաւաղան մը խլելով, զոր ինծի գարնելու համար վերուցեր էր, և աղաղակ մը արձըկելով՝ որ բոլոր մարդիկը սարսեցուց, կը սկսի այն գաւաղանով աջ և ահեակ հարուած տալ յուսահատարար։ Գրեթէ գիշեր էր, և բազմութիւնը այն աղաղակէն և այն հարուածներէն սարասփած խուճապաւ կը փախչէր, առանց տեսնելու թէ ուր կ'երթար։ Վերջը անանկ խառնակութիւն մը եղաւ որ կարծես թէ աշխարհքիս վերջն էր։ Զինուորներն՝ վրանիս թափած ժողովրդեան բռնութեամբը բաժնուեր էին մեզմէ։ Լամբերտ տեսաւ զայն, և գարձեալ յանձնելով ինծի որ զզին պլուած կենամ, գաւաղանովը ճամբայ բացաւ ժողովրդեան մէջէն, որ առաջ այնպէս կատղած էր և վերջը վախէն թուլցած, և երեք կամ չորս մը ցատքելով, իբրև թէ ուսին վրայ բան մը ունեցած ըլլար, և քանի մը նեղճամբաներէ, զորոնք քայլ առ քայլ կը ճանչնար, սկսաւ վաղել որչափ աւելի արագութեամբ որ կրնար։

— Բռնեցէք, բռնեցէք, պոռաց ան ատեն ամբոխը, բայց ոչ ոք սիրտ կ'ընէր ետենէս վաղելու։

Խեղճ լամբերտին վաղելէն ու աշխատութենէն հոգին բերանն եկեր էր։ Բայց այնու հանդերձ անդապար երագութեամբ վաղելը կը շարունակէր։ Երբ իրեն երևացաւ թէ ապահով է, սկըսաւ քայլերը կամացընել։ Իրեն ըսի որ զիս վար դնէ, վասն զի կրնայի ոտ-

քով իրեն հետեւիլ։ Բայց բացարձակապէս չողեց այնպէս ընել, և երկայն ժամանակ այն կերպով երթալիս շարունակեցինք։

Թանձր անտառի մը մէջ քիչ մը առաջ գացեր էինք, մէյմ՝ ալ եկեղեցւոյն զանդակին՝ ժողովուելու համար զարնելը լսեցինք, այն զօրաւոր և բօթարեր գանչերն մեր սրտին խորը թնդացուցին։ — Զանդակին ընդհատ կը զարնեն, ըսաւ լամբերտ։ Նշան է թէ կ'ուղեն ետենէս իյնալ։ Սիրտ ընենք ուրեմն, չենրիկ. պէտք է ամենայն կերպով պահովցընենք զմեզ։ — Աս ըսելով, քայլերը արագցուց, և ճամբան թողով՝ դէպ 'ի ձախ գարձաւ, միշտ աւելի անտառին խորերը մտնելու համար։ Բայց այն կողմէն՝ դէպ 'ի ուր որ կ'երթայինք, սուր և կատաղի ոռնալ մը լսուեցաւ՝ որ զմեզ սարսափէն պաղ կտրեցուց։ — Ո՛վ Տէր, ափշած կանչեց լամբերտ, ով Տէր, սև արջ մըն է։ Շնուտ, շուտ, սա ծառին վրայ ելլենք։

Ես տերեի մը պէս կը դողայի, և չարչար կուլայի։ Բայց վտանգին երևոյթը և լամբերտի խրախուսները քիչ մը ոգի տուին ինծի։ Ոտքերովս ու ձեռքերովս հին կաղնիի մը պլուեցայ և լամբերտին օգնելովը խոշոր ճիւղի մը վրայ ելայ։ Ինքն ալ վեր ելաւ և ինծի պատուիրելով որ ամեննին ձայն չհանեմ, սկսաւ արթնութեամբ դիտել։ Արջոյն ոռնալները միշտ երթալով աւելի սասափիկ և մեզի մօտանց կու գային։ Նշան էր թէ կենդանին դէպ 'ի մեր ուղղութեանը կու գար։ Լամբերտ ձեռքը բռնած էր իր խոշոր գաւաղանը զոր բարերազդաբար մեր այնպէս խուճապաւ վաղելուն ժամանակ ձեռքէն չէր թողուցած։ Ճեսնելով որ արջը միշտ աւելի կը մօտենար, ինծի ըսաւ որ չվախնամ թէ որ յանկարծ մեր ապաստանած ծառին պլուելու ըլլայ։ և աւելցուց որ այն ժամանակ կաղնիին ճիւղերուն պլուփիմ և որչափ կրնամ՝ աւելի վեր ելլեմ։ Իսկ իրեն համար՝ իր գաւաղանը բաւական էր։

Քանի մը վայրկեան վերջը՝ ճառերէն

թափած չոր տերևներուն վրայ կոփի-
կըռտել մը կը լսուի . արջն էր , որ հո-
տոտելով , մեր կաղնիէն քիչ հեռու էր :
Գիշերուան մթութիւնը չէր թողուր որո-
շել թէ ուսկից կու գար և ինչ կ'ընէր :
Բայց քանի մը վայրկեան ետքը մեր
կաղնիին տակ վիթխարի արջ մը տե-
սանք , որ ահագին բերանը բացած և
դէպ 'ի մեզի բարձրացուցած , երկայն
և կատաղի մռնչիւն մը կ'արձակէր :

— Վեր , վեր , պոռաց Լամբերտ , և
բանէ մը մի վախնար :

Երկու անգամ զուրցել չտուի . շու-
տով մը ճիւղերուն պլլուելով՝ զգալի
վեր բարձրացայ : Բայց վերէն բաւա-
կան ամեն բան կը տեսնէի . և անանկ
տեսարանի մը ներկայ եղայ որ այսօր
ալ մինակ մտածելով՝ սոսկալէս ու
սարսափէս մազերս կը տնկուին :

Վայրագ դազանը իմանալուն պէս որ
այն ծառին վրայ պահուըտող կայ , ե-
տևի ոտքերուն վրայ շիտակ կայնեցաւ ,
վերջը թաթերը կաղնիին բնոյն կըռ-
թընցնելով , անսանկ սաստկութեամբ
ցնցեց զայն , որ կարծես թէ արմատէն
կը շարժէր : Լամբերտ , հանդարտ և
անխով , գաւազանը ձեռքը , իրեն ա-
թոռի տեղ ծառայող խոշոր աչքէ մը
դուրս ցցուած երկայն ճիւղի մը վրայ
հեծած կեցեր էր : Զինուորի մը նման ,
որ բերդի մը պատշգամներուն վրայ կե-
ցած , և ոտքը ամուր հաստատած , թշնա-
մոյն յարձակմանը կը սպասէ : Եւ շատ
չոշացաւ յարձակմունքը . արջը թա-
թերովը ծառին կեղեր բռնելով , թէ-
պէտ գժուարութեամբ՝ բայց սկսաւ
վեր ելլել : Բայց այն միջոցին որ կը գա-
լարի որ մօտ հասնի , Լամբերտ գաւա-
զանը կը վերցնէ , և որչափ ոյժ ունէր՝
արջոյն զլուխը սոսկալի հարուած մը
կ'իջեցնէ : Գլուխը վեր բռնած՝ կայծա-
կոտ աչքերով Լամբերտին կը նայէր .
Հարուածը խոնարհեցուց զայն , և զար-
հուրելի կերպով ծառին բունին զար-
նել տուաւ . ասանկ երկու ահագին
հարուած առաւ . սարսափելի աղաղակ
մը արձրկեց , բայց յարձակելէն ետ չկե-
ցաւ . մանաւանդ թէ աւելի կատղած

կրկին յարձակիլ կը փորձէր : Արդէն
առջևի թաթերովը Լամբերտի կեցած
ճիւղը բռներ էր , և քիչ մնաց որ բեր-
նովը իրեն մէկ սրունքը խածնէր : —
Հոս զքեզ կ'ուզէի , ուրախութեամբ մը
պոռաց Լամբերտ . հիմա կը տեսնենկը :
— Աս ըսելով , զրպանէն դանակ մը կը
հանէ , և իմ ըսելէս շուտ արջին կռնա-
կը կը ցաթէկէ . ձախովը քթէն կը բռնէ ,
և աջովը դանակը բռնած կը սկսի զար-
նել յուսահատարար : Արջը այն հա-
րուածներուն՝ կը պոռայ , և հազար
կերպ շարժելով կը գալարի և կը կատ-
ղի . բայց Լամբերտ գազանին կռնակը
միշտ ամուր կը կենար , և իր վայրագ
հակառակորդին մերթ զլխուն և մերթ
վզին դանակի հարուած տալէն չէր
դադրեր : Զնկարագրուելու բան է այն
կուրէ և այն մենամարտը : Վիրաւո-
րեալ արջոյն արիւնը թանձր ցայտելով
կը թրջէր զկաղնին , և Լամբերտին ձեռ-
քերն ու երեսը բոլոր արեամբ ներկած
ու կարմրացած էր : Յանկարծ արջը
խղդուկ աղաղակ մը , մանաւանդ թէ
սուր և խորին խորդիւն մը կ'արձակէ .
վերջը զինքը մէկ կողմէն կախուած կը
տեսնեմ . ետքը թնդիւն մը կը լսեմ որ
գետինը և իմ կեցած կաղնիս սարսե-
ցուց , անկէ ետե ոչ արջը և ոչ Լամ-
բերտը տեսայ :

Վախէս և սարսափէս որ Լամբերտ
արջէն սպաննուած կամ իյնալու ա-
տեն մեռած չըլլայ , ճիւղէն վար կ'իջ-
նեմ , և բնոյն ծայրը կենալով , բարձր
և տագնապեալ ձայնով մը կը պոռամ .
Լամբերտ , Լամբերտ : Փոխանակ Լամ-
բերտէն պատասխան մը առնելու , քա-
նի մը ձայներու պոռալը կը լսեմ . Հոս
են , հոս են . վերջապէս հասանկը վրա-
նին :

Կը շարունակուի :